ՆՈՐՈՎԻ ՄՈՏԵՑՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԽՆԴՐԻՆ

Հ. Հ. ՕՀԱՆՅԱՆ
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԳՊՀ դասախոս, ՀՀ վաստակավոր մանկավարժ
Գ. Հ. ՕՀԱՆՅԱՆ
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի
մագիստրատուրայի ուսանող

Ընտանիքը, դպրոցը և միջավայրն այն հիմնական օջախներն են, որոնցով պայմանավորված է աճող սերնդի դաստիարակությունը, վաղվա քաղաքացու ձևավորումը: Եթե միջավայրի ազդեցությունը երեխայի վրա անկառավարելի գործընթաց է, ապա ընտանեկան և դպրոցական դաստիարակությունը՝ կառավարելի:

Այդ հարցում կարևորվում են ոչ միայն ուսուցիչների անելիքները, այլև ծնողների մանկավարժական գրագիտության աստիճանը: Սովորողների դաստիարակության գործընթացը գնալով դառնում է դժվարին ու բազմաբնույթ՝ կապված գիտատեխնիկական հեղափոխության արդիական նվաճումների հետ: Դրանով պայմանավորված՝ մեր ժամանակները աչքի են ընկնում մարդկային հաղորդակցման տեմպերի ու ուղիների բազմազանությամբ ու արագությամբ: Մեծացել է մարդկանց միգրացիոն տեղաշարժման չափը, աշխարհաքաղաքական փոփոխությունները դարձել են մեր ժամանակների նշանաբանը: Զարգացած շուկայական տնտեսությանը բնորոշ գիտատեխնիկական առաջընթացը իր հետ բերում է տեղեկատվական տեխնոլոգիաների թռիչքաձև զարգացում:

Այս ամենն իր արտացոլումն է գտել դպրոցականի կյանքում, երեխան հայտնվել է տեղեկատվական հաղորդակցման հորձանուտում /դասագիրք, համակարգիչ, բջջային հեռախոս, հեռուստացույց և այլն/: Կամա թե ակամա՝ երեխան յուրացնում է տարաբնույթ տեղեկատվության մեծ պաշար... Ահա թե ինչու բարդացել է ոչ միայն դասղեկների, այլև ծնողների անելիքները՝ սովորողների ուսուցման և դաստիարակության, նրանց աշխարհայացքի ձևավորման հարցերում: Հրատապ է դարձել ոչ միայն ուսումնական ծրագրերի ու դասագրքերի բարեփոխման, այլև ծնողների մանկավարժական իրազեկման խնդիրը արդիական պահանջներով:

Ժամանակակից ընտանիքներում նկատելի է ոչ բազմանդամ լինելու ձգտումը, երբ երեխան զրկվում է եղբորը, քրոջը ընդօրինակելու հնարավորությունից, և սահմանափակ միջավայրը նրան դարձնում է եսասեր ու չշփվող:

Դա դեռ բոլորը չէ. ճակատագրի բերումով ընտանիքների մեծամասնությունը երկփեղկվել է, շատ հայրերի արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով երեխաների ընտանեկան դաստիարակությունը ստացել է մայրական ուղղվածություն՝ դժվարացնելով հատկապես տղաների դաստիարակության գործընթացը: Նկատելի է, որ շատ ընտանիքներ լավ չեն կատարում իրենց դաստիարակչական գործառույթը: Դիմելով ծնողներին՝ Մակարենկոն գրել է, որ նրանք դաստիարակում են երեխաներին իրենց կյանքի ամեն վայրկյանին, նույնիսկ այն ժամանակ, երբ տանը չեն[1]: Նկատենք, որ ընտանեկան դաստիարակությունն էլ կարող է աչքի ընկնել իր դրական և բացասական կողմերով: Ուստի «Ծնողներին համընդհանուր մանկավարժական կրթություն» պահանջը ստացել է արդիական հնչեղություն:

Անցյալում դպրոցներին կից գործել են ծնողական համալսարաններ՝ տարբեր ֆակուլտետներով, ուր ընդգրկվել են տարբեր տարիքի ու կրթության ծնողներ: Ժողովրդական համալսարաններում ընդգրկված ծնողների համար կազմակերպված դասախոսությունները մշակվել են տեղական պայմանների առանձնահատկություններից ելնելով՝ հաշվի առնելով նաև ունկնդիրների պատրաստականության աստիճանը:

Փոխվել են ժամանակները, դաստիարակչական հարցերը ստացել են նոր ու բազմաբնույթ հնչեղություն ինչպես բովանդակային, այնպես էլ սոցիալ-հոգեբանական առումով: Ահա թե ինչու մանկավարժներից ու ծնողներից պահանջվում է նորովի մոտեցում տեղեկատվական հորձանուտում հայտնված երեխաներին կողմնորոշելու ու աջակցելու հարցերում[2]:

Այսօր մենք այս խնդրին պատշաճ ուշադրություն չենք դարձնում և հետո զարմանում, թե ինչու՞ է վիճակը տխուր...

Ուստի ծնողների մանկավարժական գիտելիքներով իրազեկելը ստացել է նոր հնչեղություն, նրանք մեթոդական օգնության կարիք են զգում, որպեսզի կարողանան օգնել և վերհսկել երեխաներին բազմաքանակ տեղեկատվական աղբյուրներից օգտվելու, տեխնիկայի անվտանգության

---

[1] Ա. Ս. Մակարենկո, «Մանկավարժական ընտիր երկեր», Երևան, «Հայպետհրատ», 1950թ., էջ 365:

[2] Մանկավարժական գիտելիքներ բոլորին, Երևան, «Լույս», 1986թ., էջ 12:

կանոնները պահպանելու, ընդունված չափորոշչային պահանջներից ելնելու հարցերում: Կարելի է առանձնացնել այն հարցերը, որոնց առումով դաստիարակչական աշխատանքները նորովի կազմակերպելու անհրաժեշտություն է զգացվում.

- բջջային հեռախոսից, համացանցից օգտվելու մշակույթի ձևավորում,
- համակարգիչն իբրև «Էլեկտրոնային ուսուցիչ» օգտագործելը,
- առանձին հեռուստահաղորդումներից երեխաներին զերծ պահելը, նրանց ժամանցը տարիքային առանձնահատկություններին համահունչ կազմակերպելը,
- միջանձնային հարաբերություններում հանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը,
- միջին և ավագ դպրոցականներին վնասակար սովորույթների՝ ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների վատ ազդեցությունից և ընդհանրապես հակահասարակական արարքներից զերծ պահելը,
- առողջապահական թեմաներով զրույցներ կազմակերպելը,
- կրթության նշանակության կարևորումը,
- ռազմա-հայրենասիրական դաստիարակչական աշխատանքների գործնական ուղղվածության բարձրացումը,
- ըստ կրթական աստիճանների սովորողներին տնտեսագիտական և բնապահպանական գիտելիքներով զինելը,
-սովորողների աշխատանքային դաստիարակության և մասնագիտական կողմնորոշման հարցերը շուկայական տնտեսությանը համահունչ կազմակերպելը,
- երեխաների կողմից փողոցային երթևեկության կանոնները պահպանելը,
- արտերկրից թափանցող զանազան կրոնական աղանդների քայքայիչ ազդեցությունից սովորողներին զերծ պահելը,
- ծնողների շրջանում հայ առաքելական եկեղեցու դերի ու պատմական նշանակության կարևորումը և այլն:

Հասկանալի է, որ այս հարցերի լուծումը դժվար է պատկերացնել առանց դպրոցի և ընտանիքի սերտ համագործակցության, առանց ծնողներին մանկավարժական գիտելիքներով զինելու: Ինչ վերաբերում է այդ օջախների համագործակցության ուղիներին, ապա դրանք բազմազան են, և դրանցով կարևորվում են դպրոցի տնօրինության, դասղեկների, դաստիարակչական աշխատանքների կազամկերպիչների և դպրոցական այլ օղակների անելիքները.

- ծնողների համար կազմակերպվող թեմատիկ դասախոսություններ,

- ծնողական ժողովներ,
- ծնողական խորհրդի նիստեր,
- ծնողների հետ հանդիպման օրեր,
- թեմատիկ դասղեկական ժամեր,
- անհատական զրույցներ /ծնողներ, աշակերտներ/,
- արտադասարանային դաստիարակչական միջոցառումներ,
- նշանավոր մարդկանց հետ կազմակերպվող հանդիպումներ,
- այցելություններ մշակութային օջախներ, թեմատիկ էքսկուրսիաներ, ֆենոլոգիական արշավներ և այլն:

Պետք է ավելի հաճախ անդրադառնալ դպրոց-ընտանիք համագործակցության արդյունավետ ձևերի օգտագործմանը:

Շրջապատում նկատվող բացասական երևույթները վատ են անդրադառնում երեխաների վարքագծի ձևավորմանը, որը շարունակական է լինելու փոխակերպվող հասարակության ներկա պայմաններում: Դպրոցի և ընտանիքի համագործակցության արդյունավետության բարձրացման համար պետք է կարևորել, թե հատկապես ընտանիքի ո՞ր անդամի հետ է երեխան շատ շփվում: Հետևողական դասղեկը այս հանգամանքը կարող է օգտագործել ծնողների հետ կազմակերպվող իր ամենօրյա աշխատանքներում:

Ժ. Ժ. Ռուսոն երեխայի դաստիարակության հարցում դպրոց-ընտանիք համագործակցության մեջ կարևորել է վեջինիս դերը: Իսկ Ա. Ս. Մակարենկոյի կարծիքով՝ երեխային դաստիարակում են իրերն ու երևույթները, մարդիկ, հատկապես ծնողները[1]:

Ուսանելի է շատ երկրների փորձը, որոնք բուհերում /անկախ մասնագիտությունից/ աշխատանքներ են կազմակերպում ապագա ծնողների հոգեբանամանկավարժական գրագիտության բարձրացման ուղղությամբ:

Մեր դպրոցներում դպրոց-ընտանիք համագործակցությունը կազմակերպվում է հիմնականում ավանդական ձևերով՝ օրագրերի վարում, ծնողական ժողովներ, հեռախոսազանգեր, ծնողական այցելություններ և այլն: Վերջին շրջանում այդ կապն արտահայտվում է նաև էլեկտրոնային դասամատյանների վարման միջոցով: Ժամանակն է, որ դպրոցի և ընտանիքի կապը խմբային ձևից անցում կատարի ծնողների հետ անհատական հանդիպումներ կազմակերպելու ձևին, որն առավել արդյունավետ է և ելնում է յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկություններից: Այդ հանդիպումները կարող են օգնել հատկապես այն ծնողներին, որոնք իրենց

[1] «Ընտանիք և դպրոց», ամսագիր, 2015թ., N1, էջ 44:

ավելորդ խստապահանջությամբ /կամ անտարբերությամբ/ չեն նպաստում երեխաների դաստիարակության գործընթացին՝ անջրպետ առաջացնելով դպրոցի ու ընտանիքի պահանջների միջև: Համագործակցության այս ձևը հնարավորություն է ընձեռում դասղեկին, ուսուցչին բարելավելու ոչ միայն ուսումնական, այլև սոցիալ-դաստիարակչական աշխատանքները: Ինչ վերաբերում է ավանդական ծնողական ժողովների արդյունավետության բարձրացմանը, ապա նախընտրելի է կենդանի հարց ու պատասխանը, թեմատիկ զրույցը, առողջապահական ու մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող քննարկումները, թեստային աշխատանքները, ինտերակտիվ խաղերը և այլն՝ լսատեսողական սարքերի օգտագործմամբ: Քննարկվող ուսումնադաստիարակչական բնույթի հարցերը պետք է ելնեն երեխաների տարիքային ու անհատական առանձնահատկություններից, կարողություններից, հակառակ դեպքում այդ աշխատանքները կկրեն ձևական բնույթ: Կարևոր է նաև նրանց սեռային առանձնահատկությունների հաշվառումը: Եթե աղջիկների համար նախընտրելի է զրույցը, բացատրությունը, ապա տղաների համար՝ գործնական աշխատանքը, կենդանի օրինակը և այլն:

Ծնողների մանկավարժական իրազեկման հարցերում յուրաքանչյուր դասղեկ պետք է ելնի հստակ նպատակադրումից, որը կոնկրետացնում է նրա անելիքները. օրինակ՝ «Բջջային հեռախոսի վատ ազդեցությունը երեխաների առողջության վրա»: Նախ դասղեկը կարևորում է ներկա դարաշրջանի գիտատեխնիկական նվաճումները, կրթական ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ներթափանցման փաստը, որը հեղաշրջում է առաջացրել կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում նաև ուսուցման գործընթացում: Այս թեմային նվիրված զրույց-զեկուցումը սովորողների և ծնողների համար շատ ուսանելի է և կարող է համարվել դպրոց-ընտանիք համագործակցության լավագույն օրինակ: Ընդգծվում է, որ այսօր դժվար է պատկերացնել երեխային առանց հեռախոսից ու համակարգչից օգտվելու: Նա տարաբնույթ տեղեկություններ է ընդունում ու հաղորդում՝ գրեթե կախման մեջ մնալով այդ սարքերից: Սակայն նույնքան և դեռ առավել կարևոր է նրանց ու ծնողներին իրազեկել օրգանիզմի վրա էլեկտրոնային սարքերի ունեցած վնասակար ազդեցության մասին, որ փոփոխվող էլեկտրամագնիսական դաշտը գրեթե կործանարար ազդեցություն է ունենում մարդու /առավել ևս երեխաների/ օրգանիզմի վրա[1]:

[1] «Մանկավարժություն», ամսագրեր, Երևան, 2009թ., N1-2, էջ 54:

Բջջային հեռախոսը համարվում է ցածր հաճախականության ռադիոազդանշաններ ընդունող և հեռարձակող սարք, որը վատ է անդրադառնում մարդու ներքին օրգանների ֆունկցիոնալ գործունեության վրա ընդհանրապես, իսկ օգտագործման պահին՝ մասնավորապես: Փոփոխվող էլեկտրամագնիսական ալիքները, որոնք տեսանելի չեն, հատկապես վատ են անդրադառնում մարդու գլխուղեղի ֆունկցիոնալ գործունեության վրա: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ էլեկտրամագնիսական դաշտի ճառագայթման ազդեցությամբ բարձրանում է մարդու ջերմաստիճանը 10C –ով (էներգիայի կլանում), և աղավաղվում են բնական էլեկտրամագնիսական իմպուլսները, որով խախտվում է օրգանիզմի բջիջների կառուցվածքային տարրերը[1]:

Իհարկե, մարդու մարմնի վրա ընկած էլեկտրամագնիսական ճառագայթների մի մասն անդրադարձվում է, բայց մի մասն էլ կլանվում և ունենում է վատ ներգործություն: Մարդու էլեկտրաչեզոք մոլեկուլները լիցքավորվում են, այսինքն՝ փոխվում են բջիջների քիմիական կապերը, որոնք կարող են քայքայվել կամ առաջանալ նորերը…, խանգարվում է օրգանիզմում տեղի ունեցող ասիմիլյացիայի և դեսիմիլյացիայի բնական գործընթացները[2]:

Երբ բջջային հեռախոսն օգտագործվում է այլ սարքավորումների հարևանությամբ, կարելի է լսել ձայնային ազդանշաններ, որոնք արձակում են այդ սարքերը: Նման ազդանշաններ արձակում է նաև մարդու օրգանիզմը, որը լսելի չէ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ էլեկտրամագնիսական դաշտի անցանկալի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա դիտվում է որպես ռադիոալիքային հիվանդություն: Այդ հիվանդության հետևանք կարող է լինել մարդու ընդհանուր թուլությունը, անքնությունը, ախորժակի վատացումը, հիշողության թուլացումը, եղունգների փխրունությունը, սրտի առիթմիան, քրտնարտադրությունը, գլխացավը, ընկճվածությունը և այլն[3]:

Այսպիսով, ժամանակակից տեղեկատվական աղբյուրներից երեխաները պետք է օգտվեն չափորոշչային պահանջներից ելնելով, հակառակ դեպքում առկա է դանդաղ ճառագայթման վտանգ: Պետք է ստեղծել այնպիսի իրավիճակներ /ուսումնառություն, սպորտ, զբոսանք,

---

[1] Նույն տեղում, էջ 55

[2] «Մանկավարժություն», ամսագրեր, Երևան, 2009թ., N1-2, էջ 57:

[3] Նույն տեղում, էջ 58-59:

էքսկուրսիա, այցելություն պատմամշակութային օջախներ, գրադարան, ուժերի ներածին չափով կատարվող ֆիզիկական աշխատանք և այլն/, որպեսզի երեխան որքան հնարավոր է կտրվի համացանցից օգտվելու հնարավորություններից:

Թե որքան ուսանելի են նման զրույցները սովորողների ու ծնողների համար, ավելորդ է ընդգծել: Ահա թե ինչու նորովի հնչեղություն պետք է հաղորդել դպրոց-ընտանիք համագործակցության ձևերին, որոնք ժամանակի պահանջ են և ելնում են սովորողների հայեցի դաստիարակության, մեր երկրի սոցիալ-քաղաքական շահերից:

Կյանք մտնող դեռահասը ու պատանին պետք է շրջապատված լինեն հոգատարությամբ, չոտնահարվեն նրանց տարիքային, անհատական ու սեռային առանձնահատկությունները, կարողանան իրենց տեղը գտնել փոփոխվող կյանքում: Իհարկե, դժվար է այս հարցերի համալիր լուծումը, եթե մեր երկրում սոցիալ-տնտեսական բարեփոխումները ձգձգվեն, և երկիրը չընթանա զարգացման բնականոն ուղիով: Կյանքի որակի բարելավումն այն հիմնական խթանն է, որը ենթադրում է քաղաքակիրթ ապագա, և որին կարոտ է բազմաչարչար մեր ժողովուրդն ու մեր սերունդը:

Բանալի բառեր՝ *դպրոց, ընտանիք, ծնող, իրազեկել, դաստիարակություն, համագործակցություն, բջջային հեռախոս, համացանց, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվություն և այլն:*

Օգտագործված գրականություն

1. Ա. Ս. Մակարենկո, «Մանկավարժական ընտիր երկեր», Երևան, «Հայպետհրատ», 1950թ.:
2. Մանկավարժական գիտելիքներ բոլորին, Երևան, «Լույս», 1986թ.:
3. «Ընտանիք և դպրոց», ամսագիր, Երևան, 2015թ.:
4. «Մանկավարժություն», ամսագիր, Երևան, 2009թ., N 1-2:

NEW APPROACH TO THE ISSUE OF PARENTS' PEDAGOGICAL AWARENESS

H. H. OHANYAN
PhD in Pedagogical Sciences, Associate Professor
GSU Lecturer, Honored Pedagogue of RA
G. H. OHANYAN
Master's Degree Student at
the Faculty of Economics of GSU

The article studies the ways and forms of effective interaction between the school and the family as well as the issues of pedagogical awareness of parents, which have become extremely relevant.

НОВЫЙ ПОДХОД К ПРОБЛЕМЕ ПЕДАГОГИЧЕСКОЙ ОСВЕДОМЛЕННОСТИ РОДИТЕЛЕЙ

Г. Е. ОГАНЯН
Кандидат педагогических наук, доцент,
Преподаватель ГГУ,
Заслуженный педагог РА
Г. Г. ОГАНЯН
Степень магистра
Экономический факультет, ГГУ

В статье рассматриваются пути и формы эффективного взаимодействия школы и семьи, вопросы педагогической осведомленности родителей, ставшие чрезвычайно актуальными.